ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 փետրվարի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

16
(2866)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՈԼՈՐՏԻ ՓՈՐՁ ՉՈՒՆԵՑՈՂ ԿԿՀ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ դառնալու համար նոր թեկնածուների անունները հայտնի են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝նրանք նախկինում աշխատել են նույն ԿԿ հանձնաժողովում: Մեզ հայտնի դարձավ, որ նրանցից մեկը Նվարդ Վարդանյանն է, որը նախկինում աշխատել է Արդարադատության նախարարությունում, իսկ հետագայում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում մարդկային ռեսուրսների փորձագետ է, իսկ մյուս թեկնածուն Սարգիս Միրզոյանն է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝նրանց դիմումը խիստ զարմացրել է հանձնաժողովի անդամներին, քանի որ կարծիքներ են հնչել, որ նրանք ոլորտի կառավարման փորձ բացարձակ չունեն: Ավելին՝թեկնածուների առաջադրումը ՔՊ-ի հետ անգամ համաձայնեցված չի եղել:

Ստացվում է՝մինչ ՔՊ-ն ուժեղ անդամներ է փնտրում, առավել պրոֆեսիոնալները չեն դիմում կամ ցանկություն չունեն աշխատելու ՔՊ թիմի հետ: Մարդիկ, վերջին դեպքերը տեսնելով, հասկացել են՝առանց ՔՊ-ի համաձայնության իրենց ընտրությունը տապալված է:

Հիշեցնենք, որ նախորդ տարեվերջին՝Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության խայտառակ տապալումից հետո, ԱԺ-ն հունվարի 25-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոնները թեկնածուների ընտրության համար նոր մրցույթ է հայտարարել, վերջնաժամկետն էլ փետրվարի 5-ն է:

ԿԿՀ անդամի պաշտոնում ինքնաառաջադրված թեկնածուների մրցույթն անցկացնելու է Մրցութային խորհուրդը, որը կազմված է Սահմանադրական դատարանի նախագահի, Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների, Հանրային խորհրդի եւ Փաստաբանների պալատի կողմից նշանակված ներկայացուցիչներից:

«Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝մրցույթն անցկացվում է երեք փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի ամբողջականության եւ համապատասխանության ստուգման (այսուհետ՝փաստաթղթային ստուգման) փուլն է, երկրորդը՝թեստավորման, իսկ երրորդը՝հարցազրույցի:

Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը, ի թիվս այլ անհրաժեշտ փաստաթղթերի, ներկայացնում է նաեւ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ, որում ներկայացված տվյալները ստուգում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Հարցազրույցի փուլի գնահատման արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած մասնակիցները ընդգրկվում են մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակում, որը Մրցութային խորհուրդը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին ցուցակի հրապարակմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ԿԿՀ անդամներին ընտրում է խորհրդարանը: Անցած տարի, կոպտորեն թիրախավորելով ԿԿՀ նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանին եւ Նարինե Ավետիսյանին, մերժեցին:

Այժմ էլ մրցութային հանձնաժողովը նախագահում է ՔՊ խմբակցության անդամ Արուսիկ Ջուլհակյանը:



ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի շուրջ ծավալվող վերջին աղմկոտ իրադարձություններից հետո նա չի մասնակցել ՔՊ վարչության նիստին: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ից տեղեկացավ, որ Ալեն Սիմոնյանը, որը նաեւ իշխող ՔՊ վարչության անդամ է ու մշտապես ներկա է եղել նիստերին, վարչության վերջին նիստին, որը կայացել է երեքշաբթի օրը՝փետրվարի 6-ին, չի մասնակցել, թեեւ նույն օրը ԱԺ-ում նիստ էր վարում: Ուշագրավ է, որ Ալեն Սիմոնյանը ՔՊ վարչության հիմնական անդամներից է ու մշտապես ներկա է եղել վարչության նիստերին: Մյուս կողմից՝«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ, կարծես թե, նա չի պատրաստվում հրաժարականի դիմում ներկայացնել ԱԺ նախագահի պաշտոնից, քանի որ Նիկոլ Փաշինյանն անձամբ իրենց ոչինչ չի ասել այդ մասին: Կարճ ասած, ԱԺ նախագահի հետագա պաշտոնավարման հարցը շարունակում է օդից կախված մնալ: Նա արդեն պլանավորել է երկու այցեր՝Սոֆիա եւ Վիլնյուս. ամենայն հավանականությամբ, այդ պաշտոնական եւ աշխատանքային այցերից հետո Նիկոլ Փաշինյանը կանդրադառնա Ալեն Սիմոնյանի հետագա գործունեությանը:

2018 թվականի հեղափոխությունից հետո «Հայր եւ որդի Երեմյաններ» ընկերության ղեկավար Դավիթ Երեմյանի հարաբերությունները լավացել են ՀՀ իշխանությունների հետ: Բանն այն է, որ 2018 թվականի հունիսի 1-ից մինչեւ 2024 թվականի հունվարը 200-ից ավել պայմանագրեր են կնքվել «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի հետ Քաղավիացիայի կոմիտեից մինչեւ Ազգային Ժողով: Հետաքրքիրն այն է, որ գնումները կատարված են մեկ անձից գնման սկզբունքով, առանց մրցույթի եւ մրցակցության՝ընկերաբար: Երեմյանների մատուցած ծառայություններն են՝ներկայացուցչական ծառայություններ, հանրային սննդի կազմակերպում, ՀՀ ոստիկանության կարիքների համար ներկայացուցչական, արարողակարգային ծառայությունների շրջանակներում հանրային սննդի կազմակերպում, ՀՀ ոստիկանության կարիքների համար ներկայացուցչական, արարողակարգային ծառայությունների շրջանակներում հանրային սննդի կազմակերպում եւ այլ ներկայացուցչական ծառայություններ, որոնց ամենաթանկ պայմանագրի արժեքը կազմում է 5 մլն դրամ: Սա դեռ ամենը չէ. «Հայր եւ որդի Երեմյաններ» ընկերությունը այնքան է հաճոյացել ՀՀ իշխանություններին, որ Կառավարության աջակցությամբ «խելացի» ֆերմա է կառուցել Տաշիր քաղաքում: 16 ռեստորան ունեցող Yeremyan Projects ընկերության հիմնադիր եւ տնօրեն Դավիթ Երեմյանը մինչ Տաշիր համայնքում գտնվող ֆերման հիմնելը փոքրիկ ֆերմա էր ստեղծել Ջերմուկ քաղաքում: Ջերմուկի ֆերման այժմ չի գործում, աշխատակիցներին նախորդ տարի նոյեմբերին հեռացրել են աշխատանքից, քանի որ Տաշիրի ֆեմայի բացվելուց հետո փոքրիկ ֆերման այլեւս անհրաժեշտ չէր Երեմյաններին, եւ թող կորչեն աշխատատեղերը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2022 թվականին Եվրասիական զարգացման բանկը Yeremyan Projects ընկերությանը հատկացրել է 25 մլն դոլար Տաշիր համայնքում անասնաբուծական նոր համալիրի կառուցման համար:

Շարունակությունը՝ArmLur.am կայքում:

Նիկոլ Փաշինյանի՝Հանրային ռադիոյին վերջերս տված սկանդալային հարցազրույցը թեժ կրքեր էր բորբոքել: Նախ՝հայտնի դարձավ, որ Արցախի դրոշը Փաշինյանի այցից առաջ հեռացրել էին Հանրային ռադիոյից, բացի այս, հարցազրույցում հնչեցրած աղմկահարույց հայտարարություններից հետո Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանը հայտարարեց, որ իր վրա է վերցնում Նիկոլ Փաշինյանի հետ սկանդալային հարցազրույցի պատասխանատվությունը ու ներողություն խնդրեց Հանրային ռադիոյի ունկնդիրներից: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել Փաշինյանի այս աղմկահարույց հարցազրույցից: Նախ՝տեղեկացանք, որ Նիկոլ Փաշինյանը հենց ինքն է որոշել հարցազրույց տալ, վարչապետի աշխատակազմից զանգահարել են Հանրային ռադիո ու ասել, որ պետք է հարցազրույց կազմակերպել վարչապետի հետ: Ավելին՝Փաշինյանը նաեւ ինքն է ընտրել, թե որ հաղորդավարին պետք է հարցազրույց տա. այս դեպքում խոսքը հարցազրուցավար Բարեղամ Ղուկասյանի մասին է: Հանրային ռադիոյի տնօրինությունն առաջարկել է, որ հարցազրույցի ոլորտում ավելի փորձառու մեկն անցկացնի հարցազրույցը, բայց Նիկոլ Փաշինյանը պնդել է, որ հենց տվյալ հաղորդավարի հետ է ցանկանում հարցազրույց ունենալ: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, հարցազրույցի նախօրեին՝գիշերը, քաղաքապետարանից գնացել են Հանրային ռադիո եւ շենքի մոտակայքում տեղակայված Արցախի դրոշը հանել: Հանրային ռադիոյի տնօրինությունը, դա տեսնելով, նախ անակնկալի է եկել, որ Արցախի դրոշը հեռացրել են, ապա կարգադրել է, որ կրկին դրոշը տեղադրվի: Արդեն հարցազրույցի գալիս Փաշինյանը, տեսնելով, որ դրոշն իր տեղում է, բարկացել է ու որոշել ամբողջ հարցազրույցը իսկական սկանդալի վերածել: «Ժողովուրդ» օրաթերթը այս տեղեկությունների իսկությունը պարզելու համար կապ հաստատեց Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանի հետ:

Շարունակությունը՝ArmLur.am կայքում:

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏ

ՀՀ ԴՐՈՇԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Միջազգային քրեական դատարանում փետրվարի 8-ին տեղի է ունեցել Հայաստանի՝ Հռոմի ստատուտը 124-րդ ստորագրող երկրի անդամակցությանը նվիրված դատական միջոցառումը:

Միջոցառման մեկնարկին տեղի է ունեցել Միջազգային քրեական դատարանում Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման արարողությունը, որից հետո ողջույնի եւ շնորհավորական խոսքով հանդես են եկել ՄՔԴ նախագահ Պյոտր Հոֆմայսկին, ՄՔԴ անդամ երկրների համաժողովի նախագահ Պայվի Կաուկորանտային, ինչին հաջորդել է ՀՀ ԱԳ նախարարի ելույթը:

Միջոցառման շրջանակներում Միջազգային քրեական դատարանի նախագահը ՀՀ ԱԳ նախարարին է հանձնել Հռոմի կանոնադրության հատուկ թողարկման օրինակը:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ ՄՔԴ գլխավոր դատախազը, Հաագայում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի մի շարք ներկայացուցիչներ՝ շուրջ 60 դիվանագիտական ներկայացուցչություններից, լրագրողների ասոցիացիայի նախագահը, ինչպես նաեւ այլ հյուրեր:

Ըստ աղբյուրի՝ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդես է եկել ելույթով, որում նշել է.

«Հարգարժան Դատարանի նախագահ,
Տիկին Համաժողովի նախագահ,
Ձերդ գերազանցություններ,
Հարգելի՛ դատախազ,
Հարգելի՛ քարտուղար,
Հարգելի՛ դատավորներ եւ դատախազի տեղակալներ,
Ձերդ գերազանցություններ,
Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,

1998 թվականին միջազգային հանրությունը պատմական որոշում կայացրեց՝ վերջ դնել միջազգային լրջագույն հանցագործություններին՝ ընդունելով Հռոմի ստատուտը: 2023 թվականին Հայաստանը վավերացրեց այն՝ անկեղծորեն հավատալով ստատուտի բարձր ուժին՝ վերացնելու ամենածանր հանցագործությունները եւ վերջ դնելու անպատժելիությանը: Փետրվարի 1-ին Հռոմի ստատուտն ուժի մեջ է մտել Հայաստանի համար. սկզբունքորեն կարեւոր իրադարձություն, որն այսօր մեզ այստեղ է բերել: Ես շնորհակալ եմ ձեզանից յուրաքանչյուրին այս առանձնահատուկ օրը մեզ հետ կիսելու համար:

Նյուրնբերգյան դատավարությունն իր ժամանակին ի ցույց դրեց, որ միջազգային իրավունքի դեմ հանցագործությունները կատարվում են մարդկանց կողմից, այլ ոչ թե վերացական սուբյեկտների, եւ միջազգային իրավունքի դրույթների կիրառումը հնարավոր է ապահովել նման հանցագործություններ կատարող անձանց պատժելու միջոցով: Սկսելով այս ճանապարհը՝ եկեք ընդունենք այն պատասխանատվությունը, որը գալիս է երաշխավորելու, որ ոչ ոք օրենքից վեր չէ: Այսօր Միջազգային քրեական դատարանը կանգնած է որպես հենակետ՝ ընդդեմ ցեղասպանության սարսափների, պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործությունների եւ ագրեսիայի հանցագործության: Այս առումով ՄՔԴ-ի նկատմամբ Հայաստանի հետեւողական համագործակցային մոտեցումը հիմնված է հետեւյալ հիմնական նպատակների վրա. 1) կանխել ամենածանր հանցագործությունները, որոնք մտահոգում են ամբողջ միջազգային հանրությանը, 2) միջազգային հանրությունում օրենքի գերակայության ամրապնդումը, 3) ՄՔԴ-ն առավել համընդհանուր դարձնելը:

Հայաստանը հավատում է, որ չափազանց կարեւոր է միջազգային դատական համակարգի ստեղծումը, որը կապահովի ցեղասպանություն եւ այլ ծանր հանցագործություններ կատարած անձանց պատիժը: Հայաստանը տասնամյակներ շարունակ՝ Միջազգային քրեական դատարանին անդամակցելուց առաջ էլ, նախաձեռնող եւ առաջամարտիկ է եղել ցեղասպանության ոճրագործության կանխարգելման եւ դատապարտման գործընթացներում ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ այլ միջազգային կազմակերպությունների եւ ֆորումների շրջանակներում:

ՄՔԴ-ի դերը հանցագործությունների կանխարգելման եւ հակամարտությունների խաղաղ կարգավորման համար ազնիվ եւ անաչառ արդարադատության գործընթացի ապահովման գործում նշանակալի է: Ցավոք, մեր տարածաշրջանում մենք բախվեցինք ոչ միայն հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու կամքի բացարձակ բացակայությանը, այլ նաեւ պատերազմ, ատելություն եւ ահաբեկչություն տարածելու ակնհայտ մտադրությանը: ՀՀ-ի դեմ շարունակվող ագրեսիաները եւ մեր ինքնիշխան տարածքների օկուպացիան, հայերի դեմ իրագործած սարսափելի ոճրագործությունները, Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումը, որոնց հետեւանքով ավելի քան 100.000 հայեր ստիպված են եղել փախչել իրենց տներից՝ ապաստան գտնելու Հայաստանում, ունեցել են աղետալի հումանիտար հետեւանքներ եւ շարունակում են անմիջական վտանգ ներկայացնել մեր տարածաշրջանի համար: Այս համատեքստում մենք համոզված ենք, որ Հռոմի ստատուտը, ի թիվս այլ մեխանիզմների, իրական ներուժ ունի կանխելու հետագա էսկալացիան եւ ոճրագործությունները՝ դառնալով մեր տարածաշրջանում կայունության եւ կայուն խաղաղության ուղենիշ:

Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,

Մենք ընդգծում ենք Դատարանի կարեւոր դերն աներեւակայելի վայրագություններից տուժածների համար արդարության ապահովման գործում՝ նրանց ձայն տալով, հնարավորություն տալով մասնակցել վարույթներին, օգնություն տրամադրելով եւ փոխհատուցումներ պահանջելով: Անկասկած, Հռոմի ստատուտը եւ ՄՔԴ-ն, պատասխանատվության ձգտելով, մեծապես նպաստել են միջազգային քրեական արդարադատության համակարգի արդյունավետ գործունեությանը:

Այսօր եկեք տոնենք ոչ միայն Հայաստանի հանձնառությունը, այլեւ այնպիսի աշխարհի հանընդհանուր տեսլականը, որտեղ տիրում է արդարություն, եւ պաշտպանված է յուրաքանչյուր անհատի արժանապատվությունը: Որպես Հռոմի ստատուտի նոր մասնակից պետություն՝ Հայաստանը կլինի Դատարանի ակտիվ անդամ եւ էապես կնպաստի մասնակից պետությունների համաժողովի աշխատանքներին: Միասին մենք առաջ ենք շարժվում համերաշխ՝ համախմբված Հռոմի ստատուտի գաղափարների շուրջ, քանի որ ձգտում ենք արդարությամբ եւ օրենքի գերակայությամբ սահմանված ապագայի:

Շնորհակալություն»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԹՅՈՒՐԲՄԲՌՆՈՒՄ

Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը մեկնաբանել է Իլհամ Ալիեւի՝ Հայաստանի հարավային շրջանները «ադրբեջանական» են հայտարարությունը: Գերմանական ZDF պարբերականի հետ զրույցում նա ասել է, թե Ադրբեջանի նախագահի խոսքը սխալ է մեկնաբանվել:

«Նախագահն այդպես չի ասել: Սկզբնական համատեքստում նա այլ բան նկատի ուներ: Ադրբեջանցիները երկար ժամանակ ապրել են ներկայիս Հայաստանի տարածքում: Իմ նախնիները նույնպես ապրել են Հայաստանում: Ադրբեջանցիները նույնպես պետք է իրավունք ունենան այցելելու այդ տարածք, օրինակ՝ մշակութային վայրեր եւ գերեզմանատներ, ինչը չի նշանակում տարածքային պահանջներ Հայաստանի նկատմամբ»,- ասել է Հաջիեւը:

ՄԱՆԴԱՏՆԵՐԸ ՏՐՎԵՑԻՆ

Երեւանի ավագանու 2 անդամի մանդատները տրվեցին «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքից՝ Արմենակ Բախշիի Դանիելյանին եւ Սուսաննա Գրիգորի Մելիքյանին, իսկ «Ազգային առաջընթաց» կուսակցության թափուր մանդատը փոխանցվեց Արամ Վարոսի Մանուկյանին:

Հիշեցնենք, որ փետրվարի 7-ին Երեւանի ավագանիում թեժ իրավիճակ էր: Ավագանու ընդդիմադիր 3 անդամներ զրկվեցին մանդատից, այդ թվում՝ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, «Մայր Հայաստան» խմբակցությունից Սոնա Աղեկյանը եւ Նարինե Հայրապետյանը:

Ընդդիմադիրներին մանդատից զրկելու հիմքը բացակաների թույլատրելի քանակը անցնելն էր ու քվեարկություններին չմասնակցելը:

Ընդդիմադիրներին մանդատից զրկելու նախաձեռնությունը ՔՊ-ի եւ նրանց հետ կոալիցիա կազմած «Հանրապետություն» կուսակցությանն էր, քաղաքային իշխանությանն այս հարցում ջանասիրաբար աջակցեց նաեւ «Հանրային ձայն» խմբակցությունը:

ԵԼՈՒՅԹԻ ԴԵՄ

ԱԳՆ մամուլի քարտուղար Չայխան Հաջիզադեն անդրադարձել է Հռոմի ստատուտին Հայաստանի միանալուն նվիրված արարողության ժամանակ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի ելույթին:

Ադրբեջանական կողմը դատապարտել է Միրզոյանի հայտարարությունը՝ մեղադրանքներ հնչեցնելով Հայաստանի հասցեին:

«Այս ելույթը եւս մեկ անգամ ցույց է տալիս, որ Հայաստանի միացումը Հռոմեական կանոնադրությանը փորձ էր՝ օգտագործել այդ ինստիտուտներն իրենց անհիմն պահանջների, չարամիտ գործողությունների, ատելության քարոզի, ապատեղեկատվության եւ միջազգային իրավունքի սխալ մեկնաբանման համար»,- ասել է Հաջիզադեն:

Ըստ Ադրբեջանի ԱԳՆ խոսնակի. «Ադրբեջանական կողմը շարունակելու է ջանքերը՝ ուղղված միջազգային իրավունքի լուրջ խախտումների համար անպատժելիությունը դադարեցնելու, օրենքի գերակայությանը նպաստելու, տարածաշրջանում խաղաղության, անվտանգության եւ կայունության հաստատմանը, ամրապնդմանն ու շարունակմանը»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՀ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի պաշտոնական այցը Հունգարիա կարեւորագույն դեր ու նշանակություն կունենա հայ-հունգարական հարաբերությունների համար:

Այս մասին ասաց Հունգարիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը՝ ամփոփելով Հայաստանի նախագահի՝ Հունգարիա պաշտոնական այցի արդյունքները:

Դեսպան Սմբատյանը հիշեցրեց, որ Հունգարիայի հետ տասնմեկ տարուց ավել տեւած դիվանագիտական հարաբերությունների դադարից հետո՝ 2022 թվականին, երկու երկրների ԱԳ նախարարները ազդարարեցին դիվանագիտական հարաբերությունների վերականգման մասին, որից հետո 2023 թվականին նշանակվեցին դեսպաններ երկու երկրներում:

«Փորձեցինք այն բացը, որը 11 տարվա ընթացքում ձեւավորվել է, հնարավորինս արագ լրացնել: 2023 թվականին Հայաստան էր այցելել Հունգարիայի արտաքին գործերի եւ առեւտրի նախարար Պետեր Սիյարտոն եւ Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեյմենը, Հունգարիա պաշտոնական այց է ունեցել տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

Եվ այս առումով նախագահ Վահագն Խաչատուրյանի պաշտոնական այցը երկու երկրների հարաբերությունների համար կունենա իր կարեւորագույն դերը եւ նշանակությունը: Կարծում եմ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնական այցով հունգարական կողմն ազդարարեց, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները պետք է ավելի սերտանան: Ինչպես տեսանք, թե՛ Հունգարիայի նախագահի, թե՛ Հունգարիայի վարչապետի եւ թե՛ Հունգարիայի ազգային ժողովի նախագահի մակարդակով ընդունեցին Հայաստանի Հանրապետության նախագահին»,- ասաց Սմբատյանը՝ հավելելով, որ հանդիպումները եղել են շատ բովանդակային, որոնց ընթացքում ստորագրվել է կրթական եւ մշակութային ոլորտին վերաբերվող երկու համաձայնագիր:

Այս առումով դեսպանը կարեւորեց Երեւանի պետական մանկավարժական համալսարանի եւ Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի միջեւ համաձայնագրի ստորագրումը:

«Պատահական չէր, որ ընտրվել էին հենց այդ բուհերը, քանի որ Պետեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում գործում է հայագիտական կենտրոնը:

Ափսոսանքով պետք է հայտնեմ, որ վերջին տարիներին նկատվում է հայագիտական կենտրոնների փակման միտում, իսկ այս առումով հետաքրքիր է, որ Հունգարիայի պետական այս բուհում գործում է հայագիտական կենտրոնը եւ բավականին ակտիվ գործունեություն է ծավալում:

Դրանից զատ, հունգարական կողմը հակված է Երեւանի պետական մանկավարժական համալսարանում բացել հունգարագիտության կենտրոն, ինչը ողջունվել է Երեւանի պետական մանկավարժական համալսարանի կողմից: Կարծում եմ, որ սա նույնպես քայլ կլինի երկու երկրների միջեւ կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտում հարաբերություններն ավելի սերտացնելու առումով»,- ընդգծեց դեսպանը:

Սմբատյանը նաեւ առանձնացրեց Հանրապետության նախագահի հանդիպումը Հունգարիայում հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

«Հունգարահայ համայնքը իրավական առումով ունի հատուկ դեր եւ կարգավիճակ Հունգարիայում: Եվ նմանօրինակ դեր եւ կարգավիճակ հայ համայնքների առումով ունեն երկու երկիր ողջ Եվրոպայում՝ Հունգարիան եւ Ռումինիան, որոնց խորհրդարաններում հայ համայնքը ունի իր խոսնակը: Եվ այս առումով Հունգարիայի սահմանադրությունը օրինակելի է. Հունգարիայում պաշտոնապես գրանցված 13 փոքրամասնություններից մեկը հենց հայկական ինքնավարությունն է:

Կարծում եմ՝ երկու երկրների պատմական առնչությունները շատ խորն են, եւ այդ իմաստով Տրանսիլվանիայի հայերն ունեն բացառիկ դեր Հունգարիայի պատմության մեջ, ինչը Հունգարիայի կողմից գնահատվում է: Ինչպես Հանրապետության նախագահը նշեց հայ համայնքի հետ հանդիպմանը եւ այլ պաշտոնական հանդիպումների ժամանակ, այստեղ բնակվող հայերը պետք է առաջին հերթին լինեն Հունգարիայի օրինակելի քաղաքացիներ եւ այս առումով յուրովի կամուրջի դեր ունենան երկու երկրների միջեւ»,- շեշտեց Սմբատյանը:

Դեսպանը նշեց, որ հունգարական Wizz Air ավիաընկերությունն արդեն Հայաստանում ունի բավականին ակտիվ չվացուցակ: Նա կարծիք հայտնեց, որ այս տարվա ընթացքում կկարողանան հասնել նրան, որ Բուդապեշտից ուղիղ թռիչքներ լինեն Հայաստան: Դեսպանը ցանկալի է համարում, որ թռիչքներ Բուդապեշտից ուղիղ թռիչքներ լինեն ոչ միայն Երեւան, այլ նաեւ Գյումրի: «Այս ուղղությամբ հայկական կողմն աշխատանքներ է իրականացնում: Դա, իհարկե, կախված է նրանից, թե ինչպիսի որոշում կկայացնի ավիաընկերությունը»,- նշեց Սմբատյանը՝ ընդգծելով, որ ուղիղ չվերթի բացումը յուրովի խթան կհանդիսանա զբոսաշրջության բնագավառում:

Դեսպանը նաեւ առանձնացրեց Հունգարիայի նախագահ Կատալին Նովակի այն հայտարարությունը, որ այս տարվա ընթացքում պաշտոնական Բուդապեշտը մտադրություն ունի հյուպատոսություն բացել Հայաստանում:

«Կարծում եմ եւ հուսով եմ, որ համապատասխան քայլը հայկական կողմից եւս կլինի: Ինչպես Հունգարիայի նախագահը նշեց, դա նաեւ Հայաստանի քաղաքացիների համար ԵՄ-ի հետ վիզաների ազատականացման առումով քայլ կլինի»,- ասաց Սմբատյանը:

Դիվանագետը նախագահ Վահագն Խաչատուրյանի պաշտոնական այցը կարեւորեց նաեւ Հայաստան-ԵՄ հարաբերությունները զարգացնելու առումով, քանի որ Հունգարիան 2024 թվականի հուլիսի 1-ից կստանձնի ԵՄ-ի նախագահությունը:

«Կարծում եմ՝ այդ նախագահության մեկնարկից առաջ շատ կարեւոր էր նախագահի պաշտոնական այցը Հունգարիա: Այսինքն՝ Հունգարիայի հետ հարաբերությունները կարեւորվեցին ոչ միայն երկկողմ, այլ նաեւ բազմակողմ՝ Հայաստան-ԵՄ մակարդակով»,- շեշտեց դեսպանը:

Ընդհանուր առմամբ, ըստ դեսպանի, նախագահի այցը անցավ շատ ջերմ մթնոլորտում, եւ հունգարական կողմը այդ ամենը կազմակերպել էր ամենաբարձր մակարդակով:

«Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը մամուլի ասուլիսի ժամանակ Հունգարիայի նախագահին հրավիրեց Հայաստան, եւ հունգարական կողմից այդ հրավերն ընդունվեց:

Կարծում եմ, որ այս տարի ականատես կլինենք նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այցին Հունգարիա: Բացի այդ, Հունգարիայի խորհրդարանում հանդիպման ժամանակ Հունգարիայի Ազգային ժողովի նախագահը Հայաստանի Ազգային ժողովի նախագահին հրավիրեց Հունգարիա:

Այս բարձր երկկողմ մակարդակի այցերը անպայման իրենց դերը եւ նշանակությունը կունենան երկու երկրների հարաբերությունների խորացման հարցում»,- եզրափակեց Սմբատյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 9-ին Հաագայում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Նիդերլանդների Թագավորության արտաքին առեւտրի եւ զարգացման համագործակցության նախարար Ջոֆրի ֆան Լեուվենի հետ:

Հանդիպման ընթացքում երկուստեք գոհունակությամբ ընդգծվել է Հայաստանի եւ Նիդերլանդների միջեւ ինտենսիվ քաղաքական երկխոսությունը եւ դրան համահունչ առեւտրատնտեսական համագործակցությունը խթանելու պատրաստակամությունը: Քննարկվել են այդ ուղղությամբ համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները, այդ թվում՝ ջրային ռեսուրսների կառավարման եւ գյուղատնտեսության ոլորտներում:

Մտքեր են փոխանակվել ՀՀ-ԵՄ գործընկերության շրջանակներում փոխգործակցության խորացման շուրջ. ընդգծվել է տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման համար առկա գործիքակազմի առավելագույնս օգտագործելու կարեւորությունը՝ ի շահ ԵՄ հետ ՀՀ շարունակական մերձեցման:

Անդրադարձ է կատարվել նաեւ Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտման հետեւանքով բռնի տեղահանված 100 հազարից ավելի հայ բնակչության կարիքների եւ իրավունքների հասցեագրման ուղղությամբ ջանքերին, այդ թվում՝ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ:

ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստանում Ճապոնիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Աոկի Յուտակային: Այս մասին տեղեկացնում են Կառավարության մամուլի ծառայությունից:

Վարչապետը շնորհավորել է դեսպանին դիվանագիտական առաքելությունը ստանձնելու առիթով եւ կարեւորել Հայաստան-Ճապոնիա համագործակցությունը բոլոր ոլորտներում: Մասնավորապես, Նիկոլ Փաշինյանն ընդգծել է տնտեսական կապերի հետեւողական զարգացման ու այդ ուղղությամբ հետեւողական քայլերի իրականացման անհրաժեշտությունը: Միաժամանակ, վարչապետը բարձր է գնահատել Ճապոնիայի հետ գործակցությունը ճգնաժամերի կառավարման ոլորտում:

Աոկի Յուտական նշել է, որ կներդնի բոլոր ջանքերը տարբեր ուղղություններով երկկողմ հարաբերությունների զարգացմանը նպաստելու համար: Դեսպանն ընդգծել է, որ իր երկրի կառավարությունը հետաքրքրված է ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Խաղաղության խաչմերուկ» նախագծով:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող տարբեր հարցերի շուրջ:

Վարչապետ Փաշինյանը դեսպանին մաղթել է արդյունավետ աշխատանք՝ ի նպաստ երկու երկրների համագործակցության ամրապնդման:

28-ԱՄՅԱԿ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ Է, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԶԳԱՑՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա է գտնվել Սահմանադրական դատարանի հիմնադրման 28-ամյակին նվիրված միջոցառմանը: Վերջինիս մասնակցել են նաեւ հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը, ՀՀ գլխավոր դատախազ Անա Վարդապետյանը եւ այլ պաշտոնատար անձինք:

Նիկոլ Փաշինյանը շնորհավորել է ներկաներին Սահմանադրական դատարանի ձեւավորման 28-րդ տարեդարձի առիթով եւ նշել, որ այն պետական կարեւոր ինստիտուտներից մեկն է:

«Ընդգծելով եւ կարեւորելով իշխանությունների տարանջատման եւ բաժանման սկզբունքը, որը կարծում եմ՝ ցանկացած պետության կայացման համար կարեւորագույն նախապայման է, սակայն այնպես է, որ Կառավարությունը պատասխանատվություն ունի իշխանության բոլոր օղակների գործունեության պայմաններ ապահովելու համար:

Կարծում եմ՝ Կառավարությունն ի ցույց է դրել բոլոր անհրաժեշտ միջոցները կամ առնվազն բավարար այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են Սահմանադրական դատարանի եւ ընդհանրապես դատական անկախ համակարգի ձեւավորման եւ գործունեության համար: Այդ որոշումները կայացվել են, իհարկե, գործընթացներն ու բարեփոխումները, իմ ընկալմամբ, երբեք չեն ավարտվում: Այսինքն՝ չկա մի կետ, երբ որեւէ կառավարություն եւ պետություն կարող է արձանագրել՝ վերջ, բարեփոխումներն ավարտվեցին: Եվ այդտեղ ուզում եմ ընդգծել Կառավարության եւ խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքը՝ Սահմանադրական դատարանի բնականոն եւ, ընդհանրապես, դատական անկախ համակարգի գործունեության համար իրենից կախված ամեն հնարավորն անելու:

Սահմանադրական դատարանը, իհարկե, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին է, բայց ուզում եմ ձեզ հետ կիսվել, կարծում եմ, մեր ժամանակների համար արդիական մի մտքով, որն արդիական է եղել մեր հանրապետության գոյության ողջ պատմության ընթացքում: Արդարադատությունն ինստիտուտ է, իսկ արդարությունը՝ զգացում: Այսինքն՝ արդարադատությունը մեծ հաշվով օրենքներ են, այդ օրենքներն իրականացնող եւ օրենքի առաջ հավասարությունն ապահովող մարմիններ: Իհարկե, Հայաստանի Հանրապետությունում արդարադատությանը ծառայող մարմինները գործում են լիարժեք, բայց պետք է նաեւ կիսեմ իմ տպավորությունը, որպես նաեւ Կառավարության ղեկավար, ով մարդկանց հետ շփվելու ամենատարբեր առիթներ է ունենում. արդարադատության մեր ինստիտուտները դեռեւս արդարության զգացում չեն սերմանում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մեջ: Սա շատ հետաքրքիր ֆենոմեն է: Եթե, օրինակ, հարցում իրականացնենք պետական ինստիտուտների մեջ, թե, այնուամենայնիվ, մեր գործունեությունը տեղավորվում է արդարության շրջանակներում, թե չի տեղավորվում, կարծում եմ՝ պետական ինստիտուտների եւ դատական ինստիտուտների պատասխանը դրական կլինի, բայց հանրության պատասխանն այնքան էլ դրական չի լինի: Ի՞նչն է սրա պատճառը:

Կարծում եմ՝ սրա պատճառն այն է, որ արդարության մասին ինստիտուտների եւ հանրության պատկերացումները չեն համընկնում:

Եվ սա լրջագույն պրոբլեմ է, որի հետ մենք պետք է առերեսվենք եւ որի հետ պետք է հասցեագրվենք: Մեծ հաշվով, մեր երկրում ամենատարբեր առիթներով խոսում ենք ստանդարտի մասին, բայց կարծում եմ՝ պետք է խոսենք նաեւ արդարադատության ստանդարտի մասին, թե ինչ է դա նշանակում գործնականում: Նաեւ կարեւոր է հետեւյալ հարցը՝ ի՞նչ պետք է տեղի ունենա, որ պետական ինստիտուտների եւ հանրության պատկերացումներն արդարադատության մասին համընկնեն: Կարծում եմ, որ այդ հարթակը, որտեղ այդ խոսակցությունը տեղի է ունենում, բանավեճն է Սահմանադրության շուրջ եւ ի վերջո, այդ բանավեճի արդյունքում որոշման կայացումը Սահմանադրական հանրաքվեի ժամանակ: Ես երկար եմ այս թեմայի մասին մտածել, եւ կարծում եմ, որ հենց այս խաչմերուկում տեղի ունեցած հանդիպման առանձնահատկություններն են, որ ինստիտուտների եւ հանրության պատկերացումներն արդարության եւ արդարադատության մասին չեն համընկնում: Այսինքն՝ այս հանգրվանում է, որ այդ խոսակցությունը, այդ կոնսենսուսը չի ձեւավորվե, եւ կարծում եմ, որ սա հիմա արդեն ակնհայտորեն մեր պետական ինստիտուտների եւ, ընդհանրապես, պետության կայացման համար կարեւորագույն մի խնդիր է, որի հասցեագրումն առնվազն մեր օրակարգում պետք է ունենանք: Եվ այստեղ, իհարկե, շնորհակալ կլինեմ, եթե Սահմանադրական դատարանն առանց իշխանությունների բաժանման սկզբունքների խախտման, նաեւ այս թեմայով հաղորդակցության հնարավորություն ստեղծի Կառավարության համար, որովհետեւ սրանք հարցեր են, որոնք շատ կարեւոր են:

Կրկին ուզում եմ բոլորիս շնորհավորել այս առիթով, ընդգծել իմ խորը հարգանքը Սահմանադրական դատարանի ինստիտուտի նկատմամբ եւ հույս հայտնել, որ մենք Սահմանադրության սահմանված կարգով բաժանված ինստիտուտների փոխգործակցության եւ երկխոսության հնարավորություն կարող ենք ստեղծել՝ ի վերջո արդարադատություն ինստիտուտի եւ արդարություն զգացողության համադրման եւ նույնականացման մեխանիզմների ձեւավորման մասին, որովհետեւ կարծում եմ՝ դա շատ կարեւոր է: Ձեզ հայտնի հանգամանքների, ողբերգական հանգամանքների բերումով մեր հանրության մեջ շատ խորը դիսոնանսի զգացողություն կա: Եվ այդ դիսոնանսի զգացողությունը, կարծում եմ, ամենաշատն արտահայտվում է կամ այդ դիսոնանսի եռման կետը հենց արդարադատություն ինստիտուտի եւ արդարության զգացման այս բաժանման միջեւ ընկած տիրույթում է գտնվում:

Շնորհակալ կլինենք, եթե Սահմանադրական դատարանը, մեր մյուս պետական ինստիտուտները ցանկանան, ուզենան եւ կարեւոր համարեն այս դիլեման լուծելու գործում ներդրում ունենալ», - իր խոսքում նշել է վարչապետը:

Միջոցառման ընթացքում ելույթով հանդես է եկել նաեւ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՎՏՈՎԹԱՐ

ՏՆՕՐԵՆԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Փետրվարի 9-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 08:25-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գարգառ-Գյուլագարակ ավտոճանապարհին ավտովթար է տեղի ունեցել՝ հրդեհի բռնկումով:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել են Ստեփանավանի թիվ 40 հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Մինչ հրշեջների ժամանումը վարորդին եւ 1 ուղեւորին, որը կին է, ավտոմեքենայից դուրս են բերել այդ պահին նշված վայրով անցնող ՀՀ ՆԳՆ ՓԾ Ստեփանավանի թիվ 40 հրշեջ-փրկարարական ջոկատի հրշեջ-փրկարար Լավրենտ Քալաշյանը, ապա օպերատիվորեն ժամանած Ստեփանավանի բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը նախ տեղում առաջին բուժօգնությունն է ցուցաբերել վարորդին, ապա նրան տեղափոխել Ստեփանավանի բժշկական կենտրոն:

Տեղում պարզվել է, որ ուղեւորուհին մահացել է:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Արթուր Ջաքարյանը:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Լոռու մարզի գումարտակի 2-րդ վաշտի 3-րդ դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Արմեն Բեժանյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Արման Սուքիասյանի, դասակի հրամանատար Սերգեյ Համբարյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկ Արթուր Աջամյանը, կրտսեր պարեկներ Մկրտիչ Հովհաննիսյանն ու Էդգար Ահարոնյանը:

Պարեկների այսքան շատ ժամանման պատճառը նրանում է, քանի որ հետաքրքրասեր վարորդները ավտոմեքենաները կայանում էին եւ ստեղծում էին խցանում, սակայն պարեկների ժամանումից հետո երթեւեկությունը վերականգնվել է:

Դեպքի վայր է ժամանել նաեւ ոստիկանության Ստեփանավանի բաժնի օպերատիվ խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահի գլխավորությամբ:

Տեղում պարզվել է, որ վթարի փաստով պետք է զբաղվի ՀՀ քննչական կոմիտեի Ջինվորական քննչական գլխավոր վարչության կայազորի քննչական բաժինը, որտեղից դեպքի վայր են ժամանում Ռազմական ոստիկանության եւ կայազորի քննիչները:

Դեպքի փաստով Ստեփանավանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է վարորդի եւ մահացածի ինքնությունը:

Քննիչի հանձնարարականով ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Ստեփանավանի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վարորդը Լոռու մարզի բնակիչ 36-ամյա Ալբերտ Գ.-ն է, ով ծառայում է Սահմանապահ զորքերում, իսկ մահացածը Լոռու մարզի բնակիչ 52-ամյա Ռոզա Խ.-ն է, ով աշխատում էր Պուշկինո գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 8-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 65 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴԻՄԵԼ Է ՆԳՆ

Տուրիստական Դիլիջան քաղաքում թափառում են անտեր շների խմբեր, եղել են թափառող, անտեր շների կողմից մարդկանց վրա հարձակումների, երեխաներին կծոտումների բազմաթիվ դեպքեր: Դիլիջանի համայնքապետարանը, համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը բավարար միջոցներ չեն ձեռնարկում թափառող, անտեր շների խնդիրը լուծելու համար: Դիլիջան քաղաքի բնակիչներից մեկը Ֆեյսբուքի «Դիլիջանցիք» խմբում գրել է. «Ես գրավոր դիմել եմ ՀՀ ՆԳՆ առ այն, որ պարտավորվեն ապահովել իմ եւ այլոց անվտանգ ազատ տեղաշարժը, քանի որ որեւէ մեկը պարտավոր չի հանդուրժել թափառական շների հարձակումը կամ առհասարակ ներկայությունը հասարակական վայրերում, իմ կամ ձեր երեխաները պարտավոր չեն շների լեզուն հասկանալ կամ դեմ գնալ բնության կողմից տրված իրենց ինտուիտիվ վախին ու շների հետ բարոյահոգեբանական թրիլլեր խաղան, ու ոչ մեկ թող երաշխիք չտա, թե բա «շունիկը չի հարձակվի»... Մարդը բարձրագույն արժեք է, հիշե՛ք, հաստատ շնից ու կատվից առավել է, ու այլ հեքիաթներ չպատմեք ինձ: Իմ գրավոր բողոքին լուծում չտալու դեպքում դիմելու եմ դատարան (արդեն կազմված հիմնավոր հայցադիմումով), որ պարտավորեցնեն համապատասխան կառույցներին ապահովել մեր ազատ, անվտանգ տեղաշարժը, որը ամրագրված է Սահմանադրությամբ: Նաեւ ֆիքսելու եմ ու ներկայացնելու եմ իրավապահ մարմիններին այն մարդկանց կողմից գրված վիրավորանքները, որոնք ուղղված են այլ անձանց՝ հանուն շների «պաշտպանության»»: Նույն խմբում քաղաքի բնակիչներից մեկը գրել է. «Գնացե՛ք, երաժշտական դպրոցում հարցրե՛ք ուսուցիչներին, թե քանի երեխայի են հանգստացնում. երեխաները ուշացած դպրոց են գնում, որովհետեւ մինչեւ երեխաները դպրոց են հասնում, լացում ու դողում են»: Դիլիջանցի ծնողները հայտնում են, որ թափառող, անտեր շների պատճառով իրենց երեխաները դպրոցից վախեցած են տուն գալիս: Դիլիջանի տարեց մի բնակիչ գրել է. «Ես ապրում Դիլիջանի Մոլդովական փողոցում, ամառը մեր շենքի բակում 6 տարեկան ծոռանս վրա հարձակվել էին չորս շուն, փոքրիկին գզել էին բառիս բուն իմաստով, հիմա մեր այս երեք շենքերի բակում մի շուն 12 ձագ է լույս աշխարհ բերել. հիմա պատկերացնո՞ւմ եք՝ ծոռս պիտի գա ինձ մոտ հանգստանալու ու վախենալու է տնից դուրս գալ: Դուք՝ որպես կենդանասեր, ես ձեզնից պակաս կենդանասեր չեմ, ի՞նչ եք առաջարկում, ո՞րն է այս հարցի լուծումը: Եղած շները քիչ էին,12 -ն էլ նոր ավելացան. երեխաները վախից նստեն տա՞նը, դուրս չգա՞ն, էլ ինչո՞ւ են հեռավոր ՌԴ ից հասնում Դիլիջան: Ստերջացումը օգուտ չի տալիս, սոված շների ոհմակը հարձակվում է, նույնիսկ ձեռքիդ աղբը չես հասցնում գցել աղբարկղը»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ՏՊԱՎՈՐԻՉ ԵՆ

Հայաստանում սուբվենցիոն ծրագրերի անցած տարվա ցուցանիշները բավականին տպավորիչ են եւ՝ աշխարհագրության, եւ՝ ուղղությունների ընդգրկվածության, եւ՝ ֆինանսական առումներով:

Այս մասին նշեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը՝ ներկայացնելով սուբվենցիոն ծրագրերի վերջին տարիների համեմատական ցուցանիշները:

«2018 թվականին, երբ առաջին տարին մեր կառավարությունը սկսեց սուբվենցիոն ծրագրերը, ընդամենը 3,8 միլիարդ դրամի սուբվենցիոն ծրագրեր իրականացվեց, որից կառավարության մասնաբաժինը 1,6 մլրդ դրամ էր: Մենք արդեն 2023 թվականին այս ցուցանիշը հասցրել ենք 58 միլիարդի, կառավարության մասնաբաժինը՝ 30,3 մլրդի, որը, իսկապես, տպավորիչ է թե՛ 2018-ի, թե՛ մնացած բոլոր ժամանակահատվածների համեմատ»,-մանրամասնեց նախարարը՝ հավելելով, որ 2022 թվականին իրականացվել են 36 մլրդ դրամի սուբվենցիոն ծրագրեր, որից կառավարության մասնաբաժինը՝ 18 մլրդ դրամ:

Ֆինանսական առումով մյուս ակնառու ցուցանիշը, ըստ գերատեսչության ղեկավարի, 132 տոկոս կատարողականն է, որն արձանագրվել է լրացուցիչ ֆինանսավորման եւ պլանավորվածից ավելի իրականացված աշխատանքի արդյունքում:

Սանոսյանը կարեւորեց նաեւ անցած տարի սուբվենցիոն ծրագրերի կարգի փոփոխությունները, որոնց արդյունքներն ավելի շատ նկատելի կլինեն 2024 թվականի ծրագրերում:

«Ընդհանրապես մենք սուբվենցիոն կարգն անընդհատ փոփոխում ենք: Դա, երեւի, ամենաշատ փոփոխվող կարգերից մեկն է, եւ փորձում ենք, այսպես ասած, սովորելով աշխատել»,-ասաց նա՝ ընդգծելով, որ այդ փոփոխությունները որակական, քանակական եւ թիրախային բնույթ են կրում:

Բացի այդ, դրանց արդյունքում կառավարությունը, իր մասնաբաժինը մեծացնելով, համայնքներին հորդորում է , որպեսզի այդ ծրագրերին ավելի մեծ ուշադրություն դարձնեն:

Նախարարն ընդգծեց, որ անցած տարին ոչ միայն տպավորիչ ցուցանիշներով է ամփոփվել, այլ նաեւ լավ հիմք է նախապատրաստվել 2024 թվականի լավ ցուցանիշների համար:

Կատարված փոփոխություններից նախարարն առանձնացրեց ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներին ուղղված սուբվենցիոն ծրագրերը:

«Այդ համայնքները հիմնականում քիչ բնակիչներով են բնակեցված, եւ նրանց բյուջեները բավական քիչ են, ինչի հետեւանքով խոշոր ծրագրեր չեն կարողանում իրականացնել: Մենք անցած տարվա վերջում սուբվենցիոն կարգում առանձին կարգավորում մտցրեցինք եւ այս տարի կկիրառենք. ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքների համար կառավարությունը 15 տոկոսով կմեծացնի իր մասնաբաժինը: Սա շատ մեծ աջակցություն ու օգնություն է մեր այդ համայնքներին»,-պարզաբանեց Սանոսյանը:

Ինչ վերաբերում է մյուս պահանջված ուղղություններին, ըստ նրա, համայնքները շատ ունեն աղբահանության տեխնիկայի եւ աղբամանների կարիք: Խնդրի լուծման համար ընդհանուր տեխնիկական միջոցների ցանկից առանձնացվել են մեքենաներն ու աղբամանները, եւ կառավարությունն իր մասնաբաժնի մեծացմամբ խրախուսում է դրանց ձեռքբերումը համայնքների կողմից:

Մի այլ փոփոխությամբ՝ պայման է, որպեսզի համայնքները, մասնավորապես՝ ճանապարհային ծրագրեր ներկայացնելիս դրանց տակ կամ եզրերին առկա ենթակառուցվածքների վիճակի մասին պատկերացում ունենան, թե ինչն է փոխվել, եւ ինչը փոխելու կարիք ունի, ըստ այդմ այն ներառել ծրագրում: Ճանապարհներին վերաբերող սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելիս անհրաժեշտ է նաեւ դրանց սպասարկումն ու համապատասխան տեխնիկա ունենալը հաշվի առնել:

Մշակութային տների նորոգման, հիմնանորոգման կամ կառուցման դեպքում կարեւորվել է բովանդակությունը: Համայնքները պետք է ներկայացնեն, թե այդ մշակույթի տանը ինչ միջոցառումներ են իրականացվելու, ինչ խմբեր են աշխատելու, եւ ինչ ազդեցություն կունենա այդ ամենը մշակութային կյանքի վրա:

«Սրանք միջոցներ են, որ մենք կառավարության եւ համայնքի ֆինանսական միջոցները ծախսելուց զատ, ստանանք այն արդյունքը, որը հիմնականում ակնկալվում է»,-շեշտեց Սանոսյանը:

Հաշվի առնելով ոռոգման եւ խմելու ջրերի համակարգերի անցկացման կարեւորությունը՝ կառավարությունը 5-ական տոկոսով մեծացրել է իր մասնաբաժինը՝փորձելով խթանել այս ուղղությամբ ծրագրերը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՆՎԵԼ Է ՕՐԱԿԱՐԳԻՑ

Միասնական տոմսային համակարգի ներդրմանն ուղղված հարցը հանվել է առաջիկա ավագանու նիստի օրակարգից նախագիծն ավելի համապարփակ քննարկելու եւ ավագանու քննարկմանը կրկին ներկայացնելու նպատակով:

Այս մասին տեղեկացրել է Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը «Ֆեյսբուք»-ի իր էջում կատարած գրառման միջոցով:

«Միասնական տոմսային համակարգի ներդրմանն ուղղված ավագանու որոշման նախագիծը բավականին լայն քննարկումների առարկա է դարձել: Ուրախալին այն է, որ, քաղաքական շահարկումներից եւ բացահայտ ստից զատ, շատ զուսպ, քաղաքակիրթ եւ կառուցողական քննադատության ու հարցադրումների եմ հանդիպում, ինչի պայմաններում ինքս ինձ համար որոշել եմ հնարավորինս մի կողմ դնել այդ շահարկումները եւ ստահոդ աղմուկը՝ կենտրոնանալով այն խոսքի վրա, որի նպատակը ոչ թե ուղղակի ցեխ շպրտելն է, այլ իրապես ճիշտ եւ արդարացի որոշման հանգելը:

Ուզում եմ վստահեցնել, որ բոլոր հարցերը եւ կառուցողական քննադատությունը լրացուցիչ քննարկման եւ նախագծի ստուգաբանման առիթ են դարձել հենց քաղաքապետարանի ներսում, ինչով պայմանավորված՝ խնդրել եմ քաղաքապետին հարցը հանել առաջիկա ավագանու նիստի օրակարգից նախագիծն ավելի համապարփակ քննարկելու եւ ավագանու քննարկմանը կրկին ներկայացնելու նպատակով»,- ասված է գրառման մեջ:

Փետրվարի 6-ի ասուլիսի ընթացքում Սուրեն Գրիգորյանը նշել էր, որ մայրաքաղաքում քաղաքային տրանսպորտի գնային փոփոխությունը նախատեսվում է կիրառել այս տարվա սեպտեմբերից: Նախագծի քննարկումը ներառված էր փետրվարի 13-ին նախատեսված ավագանու նիստի օրակարգում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԾՐԱԳԻՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը որոշակի աջակցություն է տրամադրում այն գործատուներին, որոնք մշակող արդյունաբերության ոլորտում աշխատանքի են ընդունում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց:

Այս մասին կառավարության «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսում ասել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը՝ մանրամասնելով, որ աջակցությունն ուղղված է այն անձանց, ովքեր նոր են մուտք գործում մշակող արդյունաբերության ոլորտ եւ չունեն բավականին փորձ, գիտելիքներ այդ աշխատանքի համար:

«Ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք այն մտքին, որ գործատուն բավականին ժամանակ, ռեսուրսներ եւ ջանք է գործադրում, որ նոր աշխատողն ունենա բավականաչափ արտադրողականություն: Այդ պատճառով մենք նախատեսել ենք միջոցառում, որով եթե մարդը, որը նախկինում չի աշխատել տվյալ ոլորտում եւ գալիս է այստեղ, ապա մեկ տարի անընդմեջ աշխատելուց հետո գործատուին կտրամադրվի փոխհատուցում վճարված եկամտային հարկի ամբողջ գումարի չափով: Մեկ աշխատակցի համար կա որոշակի սահմանափակում, այն է՝ 500 հազար դրամ տարեկան»,- մանրամասնել է նախարարի տեղակալը՝ նշելով, որ, ըստ հաշվարկների, վերջինս բավարար է, որպեսզի աշխատողը վարձատրվի մինչեւ 250 հազար դրամ աշխատավարձով, եւ գործատուն ստանա համապատասխան փոխհատուցումը տարեվերջին:

Ըստ բանախոսի՝ մեկ տարի ժամկետն ընտրվել է այն տեսանկյունից, որ առնվազն 6 ամիս է պետք, որպեսզի աշխատակիցը ստանա բավականաչափ գիտելիքներ ու հմտություններ, եւ նույնքան էլ ժամանակ է անհրաժեշտ, որ նա դառնա ընդհանուր թիմի մաս՝ ունենալով այն արտադրողականությունը, որը թույլ կտա գործատուին օգուտ ստանալ:

Գեւորգյանը հայտնել է, որ այս ծրագիրը գործում է ՀՀ բոլոր քաղաքացիների համար:

«Երբ աշխատակիցը նոր է մուտք գործում ոլորտ, հարկային համակարգի միջոցով հնարավոր է կատարել ստուգում, եւ եթե այս աշխատակիցը չի աշխատել ոլորտում անցյալ 3 տարիների ընթացքում, ապա նա կարող է դառնալ ծրագրի շահառու»,- պարզաբանել է փոխնախարարը՝ավելացնելով, որ ԼՂ-ից բռնի տեղահանվածների դեպքում որոշ առանձնահատկություններ են սահմանվել, եւ չկա քաղաքացիության պահանջ, բացի այդ, չի ստուգվում նախկինում ունեցած աշխատանքային փորձը:

SS

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը հանդիպում է ունեցել տեխնոլոգիական ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Սա նախարար Մխիթար Հայրապետյանի՝ նման ձեւաչափով անցկացված առաջին հանդիպումն էր տեխնոլոգիական համայնքը ներկայացնող ընկերությունների, վերազգային կազմակերպությունների եւ միությունների հետ:

Մխիթար Հայրապետյանն անդրադարձել է տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ), բարձր տեխնոլոգիաների (ԲՏ) ոլորտների զարգացման խթանմանն ու աջակցությանն ուղղված գործնական քայլերի անհրաժեշտությանը՝ կարեւորելով մտքերի փոխանակումը նշված ձեւաչափով եւ հույս հայտնելով, որ տեխնոլոգիական համայնքի ներկայացուցիչների հետ համագործակցությունը շարունակական է լինելու:

Նախարարի գլխավորությամբ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում SS ոլորտի զարգացման խթանման եւ ԲՏ ոլորտի զարգացման մասին օրենքի նախագծերի նախնական տարբերակները, որոնք կազմվել են ոլորտային ընկերությունների համատեղ ջանքերով եւ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Մխիթար Հայրապետյանը ներկայացրել է օրենսդրական փաթեթի մշակման եւ ընդունման քայլերի հաջորդականությունը՝ նշելով, որ քննարկումից եւ մշակումից հետո օրինագծերը ներկայացվելու են փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ:

«Ինչպես գիտեք, վաղուց արդեն հանրային տարատեսակ ընկալումներում հարցադրումներ են լինում, թե ինչու է պետությունն առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերում տնտեսության այս կամ այն ճյուղին: Շատ կարեւոր է ցույց տալ, որ ոլորտի զարգացումը, ոլորտում ավելի ու ավելի շատ ռեսուրսների կենտրոնացումը բխում է յուրաքանչյուր քաղաքացու շահերից», - նշել է նախարարը:

Օրինագծերի աշխատանքային տարբերակները մշակելիս հեղինակներն ուսումնասիրել են Հայաստանի SS եւ ԲՏ ոլորտների զարգացման դինամիկան, տնտեսական ցուցանիշները, ոլորտի շրջանառությունն ու ներուժը, տնտեսական ընդհանուր միջավայրը՝ դիտարկելով առաջարկվող տնտեսական ազդեցության տարբեր սցենարներ: Նախագիծը նաեւ տալիս է բարձր տեխնոլոգիական ոլորտի սահմանումը, ներառում է SS եւ ինժեներական ոլորտները:

Հանդիպման մասնակիցները ներկայացրել են իրենց տեսակետներն առաջարկվող նախագծի վերաբերյալ, ինչել են տարբեր կարծիքներ: Ուշադրություն է հատկացվել նաեւ գիտահետազոտական աշխատանք իրականացնող ընկերությունների խրախուսման, մասնագիտական կրթության խթանման եւ ուղեղների արտահոսքի եւ ներհոսքի հարցերին:

Նշվել է, որ առաջիկայում նախարարին է ներկայացվելու SS եւ ԲՏ ոլորտների զարգացման խթանմանն ուղղված օրինագծերի մի քանի սցենար, որոնք ներառելու են շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ տեխնոլոգիական համայնքի եւ այլ գերատեսչությունների կարծիքները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ո՞ՐՆ Է ԵՂԵԼ ՍԿԶԲԻՑ

Աստղերի եւ սեւ խոռոչների առաջացման հարցը նման է հավի եւ ձվի թեմային. ո՞րն է եղել սկզբից: Այսօրվա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հսկայական աստղերը վերածվում են սեւ խոռոչների. դա աղացուցված փաստ է: Աղացուցված է նաեւ վաղտեզերքում գերզանգվածային սեւ խոռոչների առկայությունը, որոնք դարզապես ժամանակ չէին ունենա ձեռք բերել այնքիսի զանգված, որոնք ունեն այսօր հայտնաբերվող սեւ խոռոչները: James Webb աստղադիտակը կարծես գտել է այս հանելուկի պատասխանը:

Վերջերս The Astrophysical Journal Letters գիտական ամսագիրը հրապարակել է մի հոդված, որում ԱՄՆ-ի Ջոն Հոփկինսի եւ Ֆրանսիայի Սորբոնի համալսարանի մի խումբ գիտնականներ հավաքել են James Webb-ի տվյալները վաղ տիեզերքում հայտնաբերված սեւ խոռոչների մասին: Հոդվածում ավելի շատ ապացույցներ են ներկայացված հօգուտ այն վարկածի, որ աստղերը եւ սեւ խոռոչները ստեղծվել են միաժամանակ: Այս տվյալները կհավաքվեն եւ կհամալրվեն նոր դիտարկումներով, որոնք ժամանակի ընթացքում հնարավորություն կտան ստեղծել տիեզերքի եւ իր օբյեկտների էվոլյուցիայի վերաբերյալ ավելի հիմնավոր տեսություն: Գիտնականները նկատել են, որ James Webb-ը գերզանգվածային մի սեւ խոռոչ հայտնաբերել է Մեծ պայթյունից 470 միլիոն տարի անց, եւս մեկը՝400 միլիոն տարի անց: Վերջինիս զանգվածը գնահատվում է 1,6 մլն արեգակի զանգվածի չափ: Այն գտնվում է գալակտիկայի կենտրոնում, որն ավելի թեթեւ է, քան դրա կենտրոնում գտնվող սեւ խոռոչը: Նման զանգվածի սեւ խոռոչը չէր կարող աճել եւ հասնել այժմ ֆիքսված զանգվածի: Առ այսօր արված դիտարկումները վկայում են, որ սեւ խոռոչներն առաջացել են 50 արեգակից ավելի շատ զանգված ունեցող մեռնող աստղերի փլուզումից: Նման բան չէր կարող պատահել վաղ տիեզերքում, որպեսզի առաջացներ այնտեղ նկատված էֆեկտը՝ փոքրիկ գալակտիկա, որը հավաքված է գերզանգվածային սեւ խոռոչի շուրջ:

Հետազոտողները եզրակացնում են, որ սկզբնական սեւ խոռոչներն առաջացել են առաջին աստղերի հետ միաժամանակ կամ մի փոքր ավելի վաղ՝ սկզբնական նյութի ամպերից: Ամպերի կենտրոնները փլուզվել են, եւ դրանցից յուրաքանչյուրում առաջացած սեւ խոռոչն սկսել է քամի առաջացնել՝ սկիզբ դնելով աստղերի ձեւավորման գործընթացին եւ արագացնելով այն: Իրականում, առաջին սեւ խոռոչները դարձել են գործիք, որը հավաքել եւ վերափոխել է գալակտիկաները՝դրանք վերածելով այն կառույցների, որոնք այսօր գոյություն ունեն:

«Մենք պնդում ենք, որ ամպերի գազային շիթերը դուրս են թռչում սեւ խոռոչներից՝դրանք վերածելով աստղերի եւ զգալիորեն արագացնելով աստղերի ձեւավորման գործընթացը: Մենք չենք կարող ճշգրիտ ուսումնասիրել այս ուժեղ քամիները կամ շիթերը, որոնք շատ-շատ հեռու են, սակայն գիտենք, որ դրանք պետք է մասնակից լինեն գործընթացին, քանի որ տեսնում ենք շատ սեւ խոռոչներ տիեզերքի վաղ փուլերում»,- նշել են աշխատանքի հեղինակները:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«Starmaker»

«ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՆՑՆԵԼՆ ԱՆԱԿՆԿԱԼ ԷՐ»

Երգիչ Տիգրան Խանջարյանը հայտնվել է բելգիական «Starmaker» շոուի եզրափակչում: Մրցույթը, որը բրիտանական նախագծի նախատիպն է, անցնում է մի քանի փուլով, որոնց ընթացքում մասնակիցներն իրենց ելույթներով նմանակում են փոփ երաժշտության աստղերին: Տիգրանը նշեց, որ, ըստ մրցույթի կանոնների, «մասնակիցները պետք է փորձեն վերարտադրել իրենց բաժին ընկած հայտնի երգիչների ստեղծագործությունները եւ իրենց կատարումներով հուզել հանդիսատեսին»:

Երգիչը մրցույթում հայտնվել է մայրիկի շնորհիվ, որը, առանց նրան տեղյակ պահելու, լրացրել է մասնակցության հայտը: «Պատկերացրեք՝ ինչպիսին էր զարմանքս, երբ բելգիական հայտնի հեռուստաալիքը կապ հաստատեց ինձ հետ եւ հայտնեց, որ ընտրվել եմ հաղորդման նախընտրական փուլի համար եւ պետք է գնամ հանդիպման՝ ներկայացնելու իմ երաժշտական կարողությունները: Իրոք, շատ չսպասված եւ հաճելի անակնկալ էր»:

Մինչ հաղորդմանը մասնակցելը Տիգրանն անցել է երկու նախընտրական փուլերով, որտեղ ներկայացրել է Շառլ Ազնավուրի, Ջոնի Հալիդեյի եւ մի շարք այլ հայտնի երգիչների ստեղծագործություններից:

«Ոգեւորված էի, քանի որ առաջին անգամ էի նման մրցույթի մասնակցում: Ավելի քան 3500 թեկնածուներից ընտրվեցին միայն 72-ը»,-ասում է նա:

Կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր շոուին մասնակցում է չորս եռյակ. ամեն եռյակ ներկայացնում է մեկ երգչի: Եռյակները հաջորդում են մեկը մյուսին, եւ մեկի հաղթողը շարունակում է մրցույթը մյուս եռյակիների հաղթողների հետ: Եզրափակչում ժյուրին, ինչպես նաեւ դահլիճում ներկա գտնվող հանդիսատեսը, պետք է քվեարկի իր ընտրած թեկնածուի օգտին:

«Ճնշումը մեծ է ինչպես բեմում, այդպես էլ կուլիսներում, քանի որ միայն մեկ թեկնածու կշարունակի արկածախնդրությունը մինչեւ մեծ եզրափակիչ, որտեղ կընտրվի լավագույնը: Ես ընդգրկված եմ ֆրանսիացի սիրված երգիչ Քենջիի խմբում, եւ մեր եռյակի անդամներով կատարել ենք նրա հայտնի «Andalouse» երգը: Հաղթող եմ ճանաչվել, այնուհետեւ նրա մեկ այլ՝ «Les yeux de la mama» ստեղծագործության կատարմամբ անցել եզրափակիչ փուլ»,-պատմում է երգիչը:

Մրցույթում հրավիրված է միջազգային ժյուրի, որի կազմում են իսպանացի դերասանուհի, ռադիո եւ հեռուստահաղորդավարուհի Մարիա Դել Ռիոն, ինդոնեզական ծագումով ֆրանսիացի երգչուհի Անգունը, իսպանացի դերասան եւ երգիչ Ագուստին Գալիանան, ինչպես նաեւ ֆրանսիացի դերասան, երգիչ Միկայել Գրեգորիոն, որը հայտնի է աստղային նմանակումներով: Շոուի հանդիսավարը ճանաչված բելգիացի հաղորդավար Սանդրին Կորմանն է:

Տիգրանը խոստովանում է՝ որքան էլ ներքին ձայնը հուշում էր, որ կհաղթահարի առաջին փուլը, եզրափակիչ անցնելն անակնկալ էր: «Անկեղծ ասած՝ ցանկությունս շատ մեծ էր, որ գտնվելով օտարության մեջ՝ բարձր պահեի մեր ազգի պատիվը, բայց սա միաժամանակ Եվրոպայում երաժշտական կարիերաս շարունակելու համար կարեւոր հանգամանք է: Առջեւում դեռ կա վեց հաղորդում, եզրափակիչ փուլը կկայանա մարտի կեսերին, ուր հաղթող կճանաչվի մնացած ինը մասնակիցներից մեկը: Օրը դեռ հայտնի չէ»:

Առայժմ պարզ չէ, թե ինչ երգով է երգիչը հանդես գալու եզրափակչում. «Իրենք են կատարելու երգի ընտրությունը, բայց մի բան հաստատ է, որ այն լինելու է Քենջիի ստեղծագործություններից, քանի որ նախագծի պայմանների համաձայն՝ սկզբից մինչեւ վերջ իրեն եմ ներկայացնելու»:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ»

ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՊՈԵՏԻ ՇԻՐՄԱՔԱՐԻՆ

Երեւանի Կոմիտասի անվան զբոսայգու՝ հայոց մեծերի պանթեոնում փետրվարի 9-ին տեղի ունեցավ Վահան Տերյանի ծննդյան 139-ամյակին նվիրված խնկարկման արարողություն՝ «Տերյանի հետ» խորագրով:

Արդեն ավանդական դարձած միջոցառման մասնակիցները նախ ծաղիկներ խոնարհեցին մեծ պոետի շիրմաքարին եւ հարգանքի տուրք մատուցել:

Միջոցառման համակազմակերպիչ, «Ձավախք» հայրենակցական միության նախագահ Շիրակ Թորոսյանն իր խոսքում կարեւորեց Տերյանի հայրենանվեր հասարակական-քաղաքական գործունեությունը՝ ընդգծելով, որ նա, բավականին բարձր պաշտոն զբաղեցնելով խորհրդային Ռուսաստանում, մեծ ջանքեր է գործադրել հայանպաստ որոշման նախագծերի մշակման ու որոշումների կայացման համար:

Ըստ բանախոսի՝ բանաստեղծը մեծ հիասթափություն ապրեց Արեւմտյան Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ բոլշեւիկյան իշխանության վարած քաղաքականությունից եւ որոշեց հեռանալ կուսակցությունից ու Ռուսաստանից, սակայն ճանապարհին վախճանվեց:

«Տերյանը՝ որպես խոհեմ մարդ, շատ մեծ գործ է կատարել հայ-վրացական բարեկամություն հաստատելու առումով: Նա սովորել է վրացերենը եւ հայերեն թարգմանել վրացի մեծ պոետ Շոթա Ռուսթավելու հանրահայտ «Ընձենավորը» պոեմի նախերգանքը, ինչը հսկայական նշանակություն է ունեցել հայ-վրացական մշակութային կապերի ամրապնդման համար»,-ասաց Թորոսյանը՝ համոզմունք հայտնելով, որ հայ-վրացական փոխադարձ թարգմանությունների նախատիպը եղել է հենց այդ նախերգանքի թարգմանությունը:

«Ձավախք» հայրենակցական միության նախագահի դիտարկմամբ՝ Տերյանն այն համարձակ ու ոգեղեն կերպարն էր, որ Թումանյանի ու Իսահակյանի ժամանակաշրջանում կարողացավ ասել իր նոր ու ինքնատիպ խոսքը՝ բարձր գնահատվելով հենց նրանց կողմից:

«Տերյանի պոեզիայի հենքի վրա հայ պոեզիայի տաղաչափության նոր կանոններ են առաջ եկել: Նա ջարդուփշուր արեց դասական տաղաչափությունը եւ նոր կանոններ դրեց»,- նշեց Թորոսյանը:

Անդրադառնալով ժամանակակից սերնդի համար մեծ պոետի արդիականությանը՝ նա նշեց, որ անհնար է պատկերացնել սիրո գեղեցիկ զգացողությունն առանց Տերյանի պոեզիայի, որը լցնում է հիասթափության դատարկությունն ու բազմապատկում սերը:

Միջոցառման մասնակիցներն ասմունքեցին նաեւ բանաստեղծի սիրված գործերից, ինչպես նաեւ հնչեցին երգեր՝ ստեղծված նրա բանաստեղծությունների հիման վրա:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի գրողների միության, մշակույթի եւ արվեստի, կրթության եւ գիտության բնագավառների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, ուսուցիչներ ու աշակերտներ, պոեզիայի երկրպագուներ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովը մեկնաբանել է վիճակահանության արդյունքները:

«Հետաքրքիր խումբ է: Ֆարերյան Կղզիների հետ հանդիպելու փորձ չունենք: Գիտեմ, որ այնտեղ արհեստական խոտածածկով մարզադաշտ է, որի վրա դժվար է խաղալ:

Հյուսիսային Մակեդոնիայի հետ խաղացել ենք, շատ լավ հավաքական է: Բավական լավ ու որակյալ խաղեր է խաղացել Եվրոպայի առաջնության ընտրական փուլում:

Լատվիան անհարմար հավաքական է, որն ունի նոր իտալացի գլխավոր մարզիչ: Ինձ համար լավ առիթ է Լատվիայից կրած ցավալի պարտությանը տալու արժանի պատասխան: Կարող եմ ասել, որ հիմա թույլ ընտրանիներ չկան, ու հաստատ լավ պայքարի ենք ականատես լինելու Ազգերի Լիգայի գալիք խաղարկությունում: Ըստ իս՝ մեր խմբում ֆավորիտը Հյուսիսային Մակեդոնիան է»,- Պետրակովի խոսքերը փոխանցում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան:

Հայաստանի ազգային հավաքականն ընդգրկվել է C լիգայի C4 խմբում, որտեղ նրա մրցակիցները կլինեն Ֆարերյան կղզիների, Հյուսիսային Մակեդոնիայի եւ Լատվիայի հավաքականները:

ԿԱՐԵՎՈՐԵԼ Է

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ Հաբեթնակ Կուրղինյանը Եվրոպայի առաջնությունը փորձնական մրցաշար չի համարում:

«Դժգոհ չեմ մարզիկների պատրաստվածությունից, բայց չեմ կարող ասել, թե գոհ եմ: Եվրոպայի առաջնությունը մեզ համար փորձնական մրցաշար չէ: Այն մեզ համար մնում է կարեւոր մրցաշարերից մեկը: Միշտ եմ կարեւորում Եվրոպայի առաջնությունը»,- լրագրողների հետ զրույցում ասաց մասնագետը:

Կուրղինյանի խոսքով՝ մարզիկներից շատերը այս շրջանում նաեւ կկարողանան իրենց ուժերը փորձել միջազգային ասպարեզներում:

«Մյուս 4 քաշային կարգերում, որոնցում մենք դեռեւս Օլիմպիական խաղերի ուղեգիր չունենք, երիտասարդ մարզիկներ են: Սակայն ձգտելու ենք մի քանի ուղեգիր եւս նվաճել»,-ասաց նա:

Ըստ քաշային կարգերի՝ Եվրոպայի առաջնության մեդալների համար կպայքարեն՝ Արսեն Հարությունյան՝ 57 կգ, Մեջլում Մեջլումյան՝ 61 կգ, Վազգեն Թեւանյան՝ 65 կգ, Արման Անդրիասյան՝ 70 կգ, Հայկ Պապիկյան՝ 74 կգ, Արման Ավագյան՝ 79 կգ, Մուշեղ Մկրտչյան՝ 86 կգ, Իբոյան Կնյազ՝ 92 կգ, Սերգեյ Սարսգյան՝ 97 կգ, Լեւոն Գեւորգյան՝ 125 կգ:

Եվրոպայի առաջնությունը վարկանիշային չէ Փարիզի օլիմպիական խաղերի համար: Առաջնությունը կկայանա Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում փետրվարի 12-18-ը:

● *Փետրվարի 22-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Յ. Ս. Բախ. «Սի մինոր Մեսսա»» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-15000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայկ Ստեփանյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որքա՞ն է հարակից իրավունքների գործողության ժամկետը:

Ժորա Նալբանդյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարակից իրավունքների պահպանության ժամկետը, համաձայն Հռոմի կոնվենցիայի, առնվազն 20 տարի է, սակայն ազգային օրենքներով կարող են սահմանվել պահպանության ավելի երկար ժամկետներ:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարակից իրավունքների պահպանության ժամկետները սահմանված են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհուրդը համաձայնության է հասել ֆուտբոլում կապույտ քարտի ներդրմանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 7 + 3 + 8
Կոտայքի լեռներ	0 - 5 + 3 + 7
Կոտայքի նախալեռներ	0 + 1 + 8 + 12
Գեղարքունիք	- 1 - 6 + 4 + 7
Լոռի	0 + 5 +12 + 16
Տավուշ	+ 3 + 7 +16 + 20
Արագածոտնի լեռներ	- 4 - 7 + 3 + 5
Արագածոտնի նախալեռներ	0 - 2 + 8 + 13

Արարատ	0 + 2 +13 + 15
Արմավիր	0 + 2 +12 + 14
Վայոց ձորի լեռներ	- 3 - 5 + 3 + 5
Վայոց ձորի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Սյունիքի հովիտներ	+ 7 + 10 +18 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 4 +11 + 14
ԼՂՀ	+ 2 + 5 +10 + 14
Երեւան	+ 6 + 9 +11 + 13

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.2.2024**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*